Հավելված N 2
2026 թվականի փետրվարի 5-ին կնքված
1032-11002/2026-ԱՀԳՏ11 պայմանագրի

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

### 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 11. Գեղարքունիք – 2 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 -30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

### 2. Բովանդակային հաշվետվություն

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:32:57 AMT

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 27 շահառուի Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 10 դեպքի վարում (վերափաստագրման կազմակերպում, սոցիալական նպաստ և կենսաթոշակ վճարող կազմակերպության փոփոխության կազմակերպում, համայքապետարանի և մարզպետարանի կողմից ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում, անվճար բժշկական հետազոտության անցկացման կազմակերպում) և թվով 14 ուղղորդում:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում ցերեկային կենտրոնում կազմակերպված թվով 3 միջոցառումներին՝ Սուրբ Հարության տոն, շահառուի ծննդյան օրվա նշում (2 անգամ), մասնակցել է տնային խնամքի 5 շահառու:
  Հաշվետու ժամանակահատվածում հոգեբանական խորհրդատվություն է ստացել թվով 22 շահառու:
  Թվով 3 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 27 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 27 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող 10 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից ստացվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքը և հանձնվել շահառուներին: Թվով 6 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, 2 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութը.

- Սուրբ Հարության տոնին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/iobgdn):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները**

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- Սևանի և Ճամբարակի կենտրոնների պատասխանատուները մասնակցել են ՄՍԾ համակարգող խորհրդի նիստերին:
- Սևանի և Ճամբարակի կենտրոնների պատասխանատուները մասնակցել են հոգեբույժ Գ. Փաշիկյանի վարած՝ «Հոգեկան առողջություն» թեմայով առցանց հանդիպմանը:
- Սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Շահառուի աջակցության փաստաթղթավորում» թեմայով հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են  ձևաթղթերի ու հարցաթերթերի կիրառելիությունը և այդ մասով անհրաժեշտ հմտությունները:
- Սևանի և Ճամբարակի կենտրոնների պատասխանատուները, սոցիալական աշխատողները, բուժքույրերը, հոգեբանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ֆինանսական աջակցությամբ «Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հուզական աջակցության թեժ գիծ» ծրագրի շրջանակներում իրականացվող առցանց տեղեկատվական հանդիպմանը, որի ընթացքում աշխատակիցներին ներկայացվել է «Հուզական աջակցության թեժ գծի» նպատակները, տրամադրվող ծառայությունները, շահառուների շրջանակը և շահառուներին ծառայությանն ուղղորդման կարգն ու լավագույն փորձը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/27 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 20 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 22 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –3<br>Բ -24 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 27 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 27 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 27 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 5 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 15 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն<br>լվացքի ծառայություն | 22<br>3 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07. 2026թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)